

ԲԱՑՄԱՆ ՈՒՂԵՐՁ

ՉՈՐՍՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԵՍԻՆ

Ներկայ 1912 տարին 20րդ դարու Հայ Ժամանակագրութեան մէջ պիտի արձանագրուի իրր յիշատակելի տարի մը: Մեծամեծ յառաջդիմութիւններու կամ շօշափելի արդիւնքներու տեսակէտէ ան շատ տարբեր չէ ուրիշ տարիներէ, վասնզի պէտք է խոստովանինք որ ոչ Թուրքիոյ, ոչ Ռուսիոյ, եւ ոչ Արտասահմանի Հայեր ուշագրաւ մեծ դործեր չունին ցոյց տալու: Սակայն մտաւորական ընդհանուր զարթնում մը կը նշմարուի ամեն կողմ, որ նշանն է մօտաւոր վերածնունդի:

Մտաւոր այս զարթնումին ամենէն հաւատարիմ արտայայտիչն է Հայ Տպագրութեան Չորսհարիւրամեակի տօնախմբութիւնը, զոր կատարելու կը պատրաստուի Հայութիւնն իր բոլոր կեդրոններուն մէջ:

Եւ այսօր մենք հոս ժողովուած ենք միեւնոյն նպատակով:

Ամերիկահայ Ուս. Միութիւնն է որ սկիզբը կը դնէ Հայկական այս մեծ տօնին, Ամերիկայի պէս հեռաւոր վայրի մը մէջ: Երբ տըպագրութիւնը մուտ գտաւ մեր մէջ, Ամերիկեան ցամաքը տակաւին նորագիւտ երկիր մըն էր եւ տպագրութեան ռազմիրայ Հայրերէն ոչ ոք միտքէն կրնար անցնել թէ օր մը Ատլանտեանի միւս եզերքն ալ Հայ լեզուն պիտի ծաղկի, Հայ մամուլ պիտի դործէ, եւ Ամերիկեան Հասարակութեան առջեւ տպագրական արհեստին մէջ առաջնակարգ դիրքեր պիտի դրաւեն Հայ անհատներ: Եւ երբէք չէին կրնար երեւակայել որ Նոր Աշխարհի ամենարարձր ուսմանց հետեւող Հայ երիտասարդներու խումբ մը առաջինը պիտի ըլլար իրենց անունը յաւերժացնելու համեստ այլ նշանակելի այս հանդէսով:

Հայութեան մեծագոյն զանգուածները, Ռուսահայք եւ Թրքահայք, որոշած են Չորսհարիւրամեակի տօնը կատարել յառաջիկայ Նոյեմբեր 26 ին, եւ Կարգադիր Յանձնախումբեր արդէն իսկ դործի վրայ են: Պոլիսի մէջ կազմուած է առանձին յանձնախումբ, իսկ Թիֆլիսի մէջ Կ. Հ. Հրատարակչական Ընկերութիւնը ստանձնած է կարգադրութեան դործը: Այս հանդէսներէն շօշափելի արդիւնքներ քաղելու համար յիշեալ վայրերու յանձնախումբերը կը ջանան այդ առիթով կազմել նաև

մեծ փրկու մը: Մոսկուայի Հայերն առանձին ձևերով և Հայոց Պատմագիտութեան փրկու մը գոյացնել և անմիջապէս գործի սկըսիլ: Կը յուսանք թէ ուրիշ վայրերու մէջ ալ ուր այս Հանդէսները կը կատարուին, նիւթական և գործնական արդիւնքներ ևս յառաջ պիտի գան:

Սակայն այս Հանդէսներու բարոյական արժէքն աւելի մեծ է:

Մեր ազգը թէպէտ Հին, այլ միջովայրի, բնական ու բարոյական ազգակներու, և ընկերական պայմաններու փոփոխութեամբ շարունակ իր մէջ ստացած է կենսունակութեան նոր տարրեր և այսօր երիտասարդ ազգ մը կը սեպուի: Մենք Հիմա ապագային կը նայինք:

Այս Հանդէսը Հայ տղազրութեան շքեղ արտադրութիւնները տօնելու Համար չէ կազ-

մակերպուած, այլ անոր համեստ սկզբնաւորութիւնը, չափաւոր զարգացումը և ՓԱՌԱԻՈՐ ԱՊԱԳԱՆ: 1912 թուականէն սկսած Հայ չիրը մեծազոյն ուժը պիտի ըլլայ Հայ միտքը կերտելու և ազգի ճակատազիրը կազմելու գործին մէջ:

Ամերիկահայք իբրև ամենէն երիտասարդ ուժը ազգի այլեւայլ Հատուածներուն մէջ՝ կարևոր բաժին մը պիտի ունենան այս դէպի յառաջ շարժման մէջ, և մաղթենք որ ուսանողներու սարքած այս Համեստ տօնախմբութիւնը Հիմն իսկ ըլլայ այդ մասնակցութեան, և տարուէ տարի Ամերիկահայ գաղութն ու իր ուսանող զաւակները մեծազոյն ծառայութիւններ մատուցանեն ազգային վերածնունդի փառաւոր գործին:

Ռ. Ս. ՐԱԳՈՒՊԵԱՆ